ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6(66), 31 հուլիս, 2024թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՊԱՐԵԿՆԵՐԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ Է

Հուլիսի 10-ին ՆԳ նախարար Վահե Ղազարյանն այցելել է ՆԳՆ կրթահամալիր՝ ապագա պարեկների և քրեական ոստիկանների ուսումնական գործընթացին ծանոթանալու նպատակով:

Կրթահամալիր էին այցելել նաև ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը, Ոստիկանության պետի տեղակալ Վարդան Վարդանյանը և Ոստիկանության պետի տեղակալ-պարեկային ծառայության պետ Արթուր Խուդինյանը:

Կրթահամալիրի հրապարակում Ներքին գործերի նախարարը հետևել է պարեկների՝ Արտակարգ իրավիճակում ավտոտրանսպորտային միջոցների վարման գործնական պարապմունքին, զրուցել է դասընթացավարի և ապագա պարեկների հետ, հետաքրքրվել դասերի անցկացման ու ավտովարման հմտությունների զարգացման գործընթացով:

ՆԳՆ ղեկավարությունն ուսումնական կենտրոնում հետևել է նաև ապագա քրեական ոստիկանների՝ Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության մարտավարության տեսական դասընթացին:

Վահե Ղազարյանը ծանոթացել է քրեական ոստիկանների որակավորման ուսումնական ծրագրին, հետաքրքրվել կրթահամալիրում սովորող քաղաքացիական անձանց տպավորությունների և մասնագիտական պատրաստվածության մասին:

Նա կարևորել է Քրեական ոստիկանության մասնագիտացված ծառայության ձևավորման գործընթացում նոր կադրերի համալրումը և ընդգծել ծանր, առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման գործում մասնագիտական ունակությունների և պրոֆեսիոնալիզմի ներդրման անհրաժեշտությունը, հետևել է նաև ապագա պարեկների տեսական դասընթացին, իսկ կրթահամալիրի տարածքում շրջայցի ընթացքում հետևել է ապագա պարեկների այլ դասակների գործնական պարապմունքներին:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ, ՆԳՆ կրթահամալիրի հարգելի աշխատակիցներ, շնորհավորում եմ բոլորիս պետական կարևորագույն տոնի՝ Սահմանադրության օրվա առթիվ:

Յուրաքանչյուր պետության և ժողովրդի համար անգնահատելի է Սահմանադրության պատմական նշանակությունն ու կարևորությունը:

Քսանհինը տարի առաջ՝ հուլիսի 5-ին, Սահմանադրության ընդունումով ամրագրվեց մեր պետականության ինքնիշխանությունը:

Այս օրը նաև պետական խորհրդանիշների օրն է: Սահմանադրությունը, պետական դրոշի, զինանշանի և օրհներգի հետ միասին, ամբողջացնում է պետականության բովանդակությունն ու էությունը: Սահմանադրությունն առաջին հերթին մեզանից յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների պաշտպանության գլխավոր իրավական երաշխիքն է: Սահմանադրության ընդունումով մենք ցույց ենք տվել հավակնոտ նպատակներ սահմանադրական մշակույթի ձևավորման, զարգացման և ամրապնդման ուղղությամբ՝ նախանշելով ժողովրդավարության, իրավունքի գերակայության և սոցիալական պետության համակարգի ձևավորման, կայացման ու զարգացման կարևորագույն նախապայմանները:

Մեր երկրի հիմնական օրենքը, կատարելով իր գլխավոր դերն ու առաքելությունը, անկասկած, նպաստել է նորանկախ Հայաստանի Հանրապետության հռչակած հիմնական սկզբունքների կենսագործմանը, երկրի համար դժվարին ժամանակներում ցույց տվել կայունության, օրինականության գրավականը լինելու իր ներուժն ու կենսունակությունը:

Այո՛, Սահմանադրության 1-ին հոդվածով նախանշված մեր պետության՝ ժողովրդավարական, իրավական և սոցիալական լինելու վերաբերյալ տեսլականը չի կարող ունենալ հռչակագրային բնույթ: Այն ամրագրված է որպես կարևորագույն սկզբունք, արժեք, նպատակ, իրավական ստանդարտ, որին շարունակական կատարելագործման միջոցով, աշխատանքով և վարքագծով պետք է մշտապես ձգտեն ինչպես պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, այնպես էլ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի:

Սահմանադրության հանդեպ հարգանքը հարգանք է նաև պետության և պետականության հանդեպ: Բոլորս հավասար ենք Սահմանադրության առջև: Սահմանադրությունը հանրային իշխանության և անձերի հետ հարաբերությունների կարգավորման գլխավոր պատասխանատուն է: Մեզանում առաջնային կարևորություն ունի սահմանադրական մշակույթի, սահմանադրական մտածողության ձևավորումը, Սահմանադրության ճիշտ մեկնաբանությունն ու կիրառումը: Սահմանադրությունն այն փաստաթուղթն է, որը պետք է երաշխավորի մեր պետության արագ, անցնցում, բնականոն, կայուն և շարունակական զարգացումը: Այն ունի համախմբող առանցք մեր հասարակության համար: Միայն Սահմանադրությամբ լիարժեքորեն ապրող երկիրը, Սահմանադրությունը հարգող իշխանություն և հասարակություն ունեցող պետությունը կարող է զարգանալ և հաստատուն տեղ զբաղեցնել օրեցօր ավելի բարդ ու փոփոխություններով ապրող աշխարհում:

Այսօր միջազգային ասպարեզում մեր պետության աճող վարկանիշը շարունակաբար բարձրացնելը բոլորիս իրավունքն ու պարտականությունն է և առհասարակ մեր բարոյական պարտքն է հայրենիքի հանդեպ:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության օրվա կապակցությամբ, մաղթում խաղաղություն ու ամրություն մեր պետականությանը, բարեկեցություն մեր քաղաքացիներին:

Այս օրը, ինչպես պետական իշխանության գերագույն մարմինները, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրը, անկախ իր մասնագիտությունից, քաղաքական հայացքներից և զբաղեցրած հասարակական դիրքից, պետք է վերահաստատեն իրենց անվարան հանձնառությունը և նվիրումը՝ սրբորեն պահպանելու պետական խորհրդանիշները և Սահմանադրությունը, գործելու արժեքային որոշակի տրամաբանության շրջանակներում, որոնց վրա էլ հենվում է մեր ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետությունը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս՝ մաղթելով խաղաղություն ու բարեկեցություն մեր ժողովրդին:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի հուլիսի 1-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում մեկնարկեց ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության ծառայողների մեկօրյա վերապատրաստումների շարքը՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերը կանխարգելելու, դրանց արձագանքելու, ուղղորդելու մեխանիզմներն ու առանձնահատկությունները» թեմայով:

Վերապատրաստումներն իրականացվում են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՀՀ ներքին գործերի նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Դասընթացներն իրականացվելու են հուլիս և օգոստոս ամիսներին՝ ընդգրկելով ինչպես Երևան քաղաքը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը:

Ներկաներից ողջունեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ Միսակ Մարկոսյանը և իր խոսքում ընդգծեց վերապատրաստման թեմայի արդիականությունը համայնքային ոստիկանության՝ որպես ոստիկանության չորս հենասյունային ուղղություններից մեկի կարողությունների զարգացման և օրենսդրական փոփոխությունների համատեքստում:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑ ԱՎԱՐՏՎԵՑ

Հունիսի 25-28-ը ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում փորձագիտական այց տեղի ունեցավ, որի ընթացքում Կրթահամալիրում էր գտնվում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից ձևավորված փորձագիտական խումբը:

Քառօրյա աշխատանքի ընթացքում փորձագիտական խումբը հանդիպումներ ունեցավ Կրթահամալիրի արտաքին և ներքին շահակիցների տարբեր ներկայացուցիչների հետ, քննարկվեցին Կրթահամալիրի առաքելության իրականացմանը միտված բազմաբնույթ հարցեր: Ուսումնասիրվեցին Կրթահամալիրի կառավարմանը նպաստող մի շարք ներքին

իրավական ակտեր, ինչպես նաև մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում էին ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր փուլերին:

Այցի ավարտին փորձագիտական խումբը ներկայացրեց Կրթահամալիրում իրականացված աշխատանքի ամփոփ եզրակացությունը, որոշակի շեշտադրումներ կատարեց հավատարմագրման տարբեր չափանիշներով Կրթահամալիրի ունեցած ձեռքբերումների, հասարակության շրջանում ունեցած բարձր դերի և ճանաչելիության իմաստով:

Նշենք, որ փորձագիտական խումբն այցի ընթացքում հավաքագրում էր տարբեր փաստեր, որպեսզի, ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների, դրանք վերլուծվեն, որից հետո կկազմվի նախնական զեկույց և կներկայացվի Կրթահամալիր՝ քննարկելու նպատակով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2024 թ. հունիսի 28-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 3-րդ կուրսի սովորողների ուսումնական պրակտիկայի ամփոփումը:

Մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Հովհաննիսյանը, պրակտիկայի ղեկավարները՝ ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հ. Խաչատրյանը, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետի պարտականությունների կատարող, ոստիկանության մայոր Գ. Մարուքյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պայմանագրային հիմունքներով դասախոս Մ. Պողոսյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, ուսումնական պրակտիկա անցած սովորողները:

Պրակտիկայի ամփոփման ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը նշեց, որ պրակտիկայի անցկացման վայրերից ստացված արձագանքների և պրակտիկայի ղեկավարների ներկայացրած դիտարկումների հիման վրա կարող ենք փաստել, որ ուսումնական պրակտիկայի ծրագրով սահմանված պահանջները պատշաճ պահպանվել են, իսկ նպատակը կարելի է համարել իրագործված:

Պրակտիկայի անցկացման ընթացքում սովորողները պատշաճորեն ընդգրկված են եղել ծրագրով նախատեսված միջոցառումներին, սահմանված կարգով կատարել են ծրագրով նախատեսված հանձնարարությունները:

Այնուհետև ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Հովհաննիսյանն անդրադարձավ քրեաիրավական խմբին տրված հանձնարարության կատարմանը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավճռի դեմ վերաքննության կարգով բերվող բողոքի պատրաստմանը:

Ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պայմանագրային հիմունքներով դասախոս Մ.Պողոսյանն անդրադարձավ վարչաիրավական խմբին տրված հանձնարարության կատարմանը՝ վերադասության կարգով և դատական կարգով վարչական ակտերի բողոքարկման հայցադիմումների պատրաստմանը:

Իրենց խոսքում բանախոսները նշեցին, որ ընդհանուր առմամբ սովորողները մեծ պատասխանատվությամբ են կատարել հանձնարարությունները, իսկ կատարման արդյունքում պատրաստված վարութային փաստաթղթերը բավարարում են օրենքով դրանց ներկայացվող պահանջներին:

Պրակտիկայի ամփոփման վերջին միջոցառումը քաղաքացիաիրավական խմբում ընդգրկված սովորողների մասնակցությամբ

բեմականացված դատախաղն էր, որի ընթացքում սովորողները ցուցադրեցին քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ոլորտներում իրենց գիտելիքների կիրառման հմտությունները:

Պրակտիկայի ամփոփմանը նվիրված միջոցառման վերջում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի պատասխանատուներին պրակտիկայի պատշաճ կազմակերպման համար, նաև պրակտիկայի ղեկավարներին և սովորողներին՝ պրակտիկայի պատշաճ անցկացման և մասնակցության համար:

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Հունիսի 25-26-ը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվեց բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրերով վերապատրաստման երկօրյա դասընթաց՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի մի խումբ դասախոսների համար, որը կազմակերպվել էր ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից:

Դասընթացի ընթացքում ուսումնասիրվեց և քննարկվեց բարեվարքության համակարգի տարրերը՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացմամբ պայմանավորված՝ նվերներ ընդունելու սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

Դասընթացը վարեցին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետի պարտականությունները կատարող Տիգրանուհի Խալաֆյանը, ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության բարեվարքության հարցերով կազմակերպիչ Անահիտ Կարապետյանը, ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության փրկարար ծառայության և քաղաքացիական ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունների իրականացման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Թագուհի Ցականյանը:

ՆԱ, ՈՎ ԳԻՏԻ «ԻՆՉՈՒ»-Ն, ԿԱՐՈՂ Է ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԳՐԵԹԵ ՑԱՆԿԱՑԱԾ «ԻՆՉՊԵՍ»-Ը

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Ժաննա Վարդանի Տեփանոսյանի հետ:

- Ինչպիսի՞ն էր փոքրիկ Ժաննան: Երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Այս փոքրիկ աղջնակը շատ շարժուն էր, ակտիվ, անընդհատ ուզում էր խառնվել մեծերի խոսակցությանը, բայց հետո հիշում էր, որ մայրիկն արգելել է: Հաճախում էր տարբեր խմբակների՝ երգի, պարի, սպորտի:

Մանկուց ընտանիքում բոլորի ուշադրությունը միշտ կենտրոնացված է եղել ինձ վրա, քանի որ ես ընտանիքի միակ զավակն եմ, երևի հենց դրա համար էլ երբևէ չեմ ցանկացել ունենալ քույր կամ եղբայր:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկությանս տարիները շատ վառ և գունավոր են եղել, սիրում էի բակային խաղերը, հիշում եմ իմ առաջին հեծանիվը, որն ինձ ծնողներս էին նվիրել: Հետաքրքիրն այն է, որ շատ չարաճճի չեմ եղել, հիմնականում զբաղվել եմ մշտադիտարկմամբ՝ անդադար հետևելով մեծերի վարքագծին:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիներին ակտիվիստ եմ եղել, առօրյան հագեցած է եղել տարբեր մրցույթներով, միջոցառումներով, օլիմպիադաներով: Ի դեպ, մինչև օրս կարծես թե նմանատիպ ավանդույթները շարունակվում են:

- «Փոքրիկ իշխան». Անտուան դը Սենտ-Էքզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Վերջին ժամանակներում ավելի շատ ռեալիստական մոտեցումների կողմնակից եմ դարձել, հետևաբար, իմ մոլորակը ներկայիս իրականությունն է:

- Ի՞նչ ես կարծում՝ կա՞ն վատ գրքեր:

- Կարծում եմ՝ վատ գրքեր չկան, յուրաքանչյուր գրքից էլ կարելի է սովորել որևէ դրական բան:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, ո՞ր գիրքն է, որ 2-րդ անգամ կընթերցես:

- Ընթերցելիս ինձ համար ամենահաճելին այն է, որ հանդիպում եմ հեղինակի այնպիսի մտքերի, որոնք կարծես թե արտատպված լինեն սեփական մտքերիցս: Սրանից ելնելով՝ կնշեմ է. Մ. Ռեմարկի «Հաղթական կամարը» գիրքը՝ չնայած որ կարելի էր շատերին հիշատակել: Իսկ գիրքը, որը կարելի է անվերջ կարդալ, մեր Սուրբ գիրքն է՝ Աստվածաշունչը:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Մտքերն իրականանալու հատկություն ունեն գաղափարով ոգեշնչվելով՝ երազում եմ ամեն օր. հարցին կխուսափեմ պատասխանելուց, քանի որ, իմ կարծիքով, երազանքները չեն բարձրաձայնում, իսկ նպատակս այս պահին բուհը հաջողությամբ ավարտելն է:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

-Ընթերցելը:

- Ոստիկանական համակարգն ուժային կառույց է: Կին, ոստիկան. այս հակասություններն ինչպե՞ս ես կարգավորում:

- Կին և ոստիկան հասկացությունները բացարձակ ոչ մի հակասության մեջ չեն գտնվում: Սեռը բացարձակ նշանակություն չունի ուժային կառույցում պատշաճ ծառայություն իրականացնելու տեսանկյունից, տարբերությունը զուտ ֆիզիկական ուժի գործադրման հնարավորությունների մակարդակում է, ինչը կոմպենսացվում է այլ միջոցների գործադրմամբ: Հետևաբար, մասնագիտական հարուստ գիտելիքներով օժտված ծառայողը, անկախ սեռից, իրական հնարավորություն ունի դիմադրելու ծառայության ընթացքում առաջացած ցանկացած մարտահրավերի և հաղթահարելու ցանկացած խոչընդոտ: Այլ է խնդիրը, որ ոստիկանությունում ծառայության պետք է անցնեն կամային հատկանիշներով օժտված անձինք:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Ինձ համար մանկուց գրավիչ է եղել այս մասնագիտությունը, սակայն որոշումս վերջնականապես ամրապնդվել է հարազատներիս, ընկերներիս խորհրդով, որոնց երախտապարտ եմ:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Կրթահամալիրում ուսանողական կյանքը շատ հագեցած է, այստեղ մասնագիտական կարիերայի լավագույն ֆունդամենտ կարելի է ստեղծել:

- Ոստիկան /պարեկ/. մի քանի բառով բնութագրի՛ր՝ ի՞նչ է քեզ համար այն:

- Ոստիկանն ինձ համար անվտանգություն է, ուժ է և, ի վերջո, պետականություն:

- Ինչպիսի՞ն պետք է լինի իրական ոստիկանի կերպարը:

- Իրական ոստիկանը նախ և առաջ պետք է գիտակ լինի, ունենա բարձր իրավագիտակցություն, լինի ազնիվ, պատասխանատու, ցանկացած ոլորտում հասարակության յուրաքանչյուր անդամի համար դրսևորի օրինակելի վարքագիծ:

- Մի քանի բառով նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Նախորդիվ ասվածը Կրթահամալիրի սովորողին ևս վերաբերելի է, քանի որ նա նույնպես ոստիկանության ծառայող է:

- Ո՞րն է ոստիկան դառնալու քո շարժառիթը:

- Շարժառիթը մասնագիտական աճն ու զարգացումն է:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Նորից կընտրեի կրթահամալիրը կամ գուցե օդաչու դառնայի, վերջերս մտքեր առաջացել են...

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

- Եղեք համարձակ, անընդհատ զբաղվեք ինքնակատարելագործմամբ. կրթահամալիրը գնահատում է գիտելիքը:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Թեման էական չէ, կախված է զրուցակցից կամ ունկնդիրներից, հաճելի միջավայրում անվերջ կարելի է խոսել նույնիսկ ամենաանհեթեթ թեմայով:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Մոտիվացիան:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Բարյացակամ, պատասխանատու, պատվախնդիր:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Եվս մեկ հնարավորություն:

- Օրն սկսում ես ժամը...

- 07:30-ից:

- Սիրածդ աֆորիզմը:

- Նա, ով գիտի «ինչու»-ն, կարող է հաղթահարել գրեթե ցանկացած «ինչպես»-ը:

- Սիրելի զբաղմունքդ:

- Լավ երաժշտություն լսելը:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Մեր ճանապարհը նման է լեռ բարձրանալուն, յուրաքանչյուր թվացյալ անհաջողություն ընդունեք իբրև մարտահրավեր և նոր հնարավորությունների սկիզբ, թույլ մի՛ տվեք, որ աննշան քամիները և թեկուզև ծանր փոթորիկները խանգարեն ձեզ բարձրանալ, եղե՛ք համառ, հավատացե՛ք ինքներդ ձեզ, և ամեն բան կհաջողի:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Շնորհակալ եմ, որ մինչև վերջ հետևեցիր:

Հարցազրույցը վարեց
առաջատար մասնագետ
Լիանա Սահակյանը

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

***

Երբ վախկոտները դառնում են հերոսներ, իսկ հերոսները մոռացվում են, այդ ժամանակ աշխարհում տիրում է անբարոյականությունը: Մի՛ հերոսացրեք նրան, ով անգամ չգիտի՝ ինչ է հայրենիքը:

Սողոմոն Թեյլերյան

***

Կյանքն իսկականից գեղեցիկ է միայն այն ժամանակ, երբ նրանում տեղ է գտել ողբերգությունը:

Թեոդոր Դրայզեր

***

Եթե ուզում եք ինձ սպանել, պարզապես ինձ թուրք անվանեք, և ես կմեռնեմ ամոթից:

Էռնեստ Հեմենգուեյ

***

Երջանկությունն այն չէ, որ միշտ անես այն, ինչ ուզում ես, այլ այն, որ միշտ ուզես այն, ինչ անում ես:

Լև Տոլստոյ

***

Ամենագլխավորը աչքերով չես տեսնի, միայն սիրտն է սրատես:

Անտուան դը Սենտ Էքզյուպերի

***

Քարեր նետում են միայն պտղատու ծառերին...

Հնադարյան իմաստություն

***

Երբ մարդը քեզ գովում է, մտածում ես. «Ահա թե ինչպիսին եմ ես», իսկ երբ նույն մարդը քեզ փնովում է, մտածում ես. «Ահա թե ինչպիսին է նա»:

Կ.Մելիխան

***

Զարմանալի է կառուցված մարդը. նա սգում է, երբ կորցնում է հարստությունը և անտարբեր է, երբ անվերադարձ անցնում են իր կյանքի օրերը:

Աբուլ Ֆարաջ

***

Կյանքի նպատակը պետք է լինի երջանկությունը, այլապես կրակը չի վառվի բավականաչափ պայծառ, շարժող ուժը չի լինի բավականաչափ հզոր, և հաջողությունը չի լինի լրիվ:

Թեոդոր Դրայզեր

***

Մենք գտնում ենք մեր կյանքում այն, ինչ ինքներս ենք նրանում ներդնում:

Էմերսոն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե նրանց մոտեցնես քեզ, կնստեն վզիդ, եթե հեռացնես քեզնից, կատեն»: Այդ մարդիկ հիմարներն են և ... : Ովքե՞ր:
2. Այն հարցին, թե որտեղ կցանկանար ընկնել մահից հետո՝ դրա՞խտ, թե՞ դժոխք, Չ.Չապլինը պատասխանել է. «Մի կողմից՝ դրախտ, որովհետև այնտեղ լավ եղանակ է, մյուս կողմից՝ դժոխք, որովհետև այնտեղ ...»: Ի՞նչ կա դժոխքում:

Թիվ 4-ում զետեղված հարցերի պատասխանները

1. Անունը
2. Օղաբլիթ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

Լեոնարդո դա Վինչին իր նշանավոր «Խորհրդավոր ընթրիք» կտավի համար 40 տարի փնտրում էր համապատասխան դեմքեր՝ Հիսուսին և առաքյալներին պատկերելու համար: Սկզբում Հիսուսի դեմքը նկարելու համար նրան գրավեց զարմանալիորեն գեղեցիկ ու բարի Պիետրո Բենդենելիի դեմքը, և նրան դարձրեց բնորդ: Անցավ 40 տարի: Նկարիչը փնտրում էր Հուդայի կերպարն արտացոլող բնորդ: Մի օր նրան հանդիպեց մի թափառաշրջիկ, որին նոր էին բանտից դուրս հանել, և նրա դեմքի արտահայտությունը հետաքրքրեց նկարչին: Այդ դեմքը մեղքերի հետևանք էր կրում իր վրա, կրքերի ու անօրենության կնիք կար նրա վրա: Որքան մեծ եղավ նկարչի զարմանքը, երբ նա իմացավ, որ այդ մարդը նույն այն սքանչելի դեմք ունեցող Պիետրո Բենդենելին էր...

***

Մի իմաստունի հարցրին.

- Ընկերների քանի՞ տեսակ գոյություն ունի:

- 4 տեսակ, - պատասխանեց նա: - Կան ընկերներ, որոնք ուտելիքի պես են. դու նրանց կարիքը զգում ես ամեն օր:

Կան ընկերներ, որոնք դեղի պես են. դու փնտրում ես նրանց, երբ վատ ես զգում քեզ:

Կան ընկերներ, որոնք հիվանդության պես են. նրանք իրենք են փնտրում քեզ:

Բայց կան նաև ընկերներ, որոնք օդի պես են. նրանք անտեսանելի են, բայց միշտ քեզ հետ են:

ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԴԱՍԵՐ

Մի իմաստուն մարդ մի որդի ուներ, որը շատ շուտ բռնկվող ու անզուսպ տղա էր: Մի օր նրա հայրը կանչում է որդուն և տալիս է մի պարկ՝ լցված մեխերով, և ասում, որ ամեն անգամ, երբ չկարողանա իր բարկությունը զսպել, մեխ խփի գերանի վրա:

Առաջին օրերին գերանի վրա շատ մեխեր հայտնվեցին: Հաջորդ շաբաթ նա սովորեց ավելի զուսպ լինել, և մեխերի թիվը կրճատվեց:

Երիտասարդը հասկացավ, որ ավելի հեշտ է զսպել, քան մեխ խփել: Մի օր էլ նա զգաց, որ լիովին տիրապետում է իրեն և մեխ չխփեց գերանին: Ուրախացած եկավ հոր մոտ և պատմեց, որ ինքնատիրապետում է ձեռք բերել:

Այս անգամ հայրը նրան ասաց, որ ամեն անգամ, երբ կարողանա զսպել իրեն և չբարկանա, թող մի մեխ հանի: Ժամանակն անցնում էր...Եվ ահա եկավ այն օրը, երբ գերանին ոչ մի մեխ այլևս չկար: Նա եկավ հոր մոտ և նրան պատմեց այդ մասին:

Հայրը որդուն տարավ գերանի մոտ և ասաց.

«Դու շատ լավ կարողացար կատարել առաջադրանքը: Բայց տեսնու՞մ ես՝ որքան շատ հետքեր են մնացել գերանի վրա: Այն երբեք առաջվա նման չի լինի: Երբ բարկացած ժամանակ մարդուն վիրավորում ես, ահա այսպիսի սպիներ ես առաջացնում նրա ներսում: Հետո ինչքան էլ ուզում ես ներողություն խնդրի, միևնույն է, սպին մնում է»:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ԿԱՄՔ ՈՒ ՀԱՎԱՏ. ՍԱ Է ԼՈՒՍԱՎՈՐ ԱՊԱԳԱՅԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Հայրենիք ունենալը մեր իրականության մեջ պարծանք է, իսկ այն պահպանելը՝ մեծագույն պատասխանատվություն: Ներքին և արտաքին բազում մարտահրավերներ մշտապես եղել են ու կլինեն: Կարևոր է դրանց հակադարձ բանաձև տալ, որի արդյունքում հայն իր հայրենիքում անվտանգ ապրելու երաշխիք կստանա: Սա է իմ գործունեության հիմնաքարը: Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն կառուցելու ճանապարհը խորդուբորդ է, բայցև՝ հնարավոր: Կամք ու հավատ ապագայի նկատմամբ. ահա՛ և բոլորիս անհրաժեշտ բանաձևը: Չափազանց բարդ և պատասխանատու, բայց նույնքան էլ պատվաբեր ծառայություն է իրականացնում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ցանկացած աշխատակից: Իմ անցած ուղին ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ինձ երկու կանոն է սովորեցրել. լինել ծառայության մեջ արդար և անաչառ, թե՛ ընկերների, թե՛ հասարակության բոլոր ներկայացուցիչների անվտանգությունն ապահովելու պատասխանատվություն կրել ցանկացած իրավիճակում, քանի որ մեր երկիրը կանգնած է չափազանց լուրջ մարտահրավերների առաջ: առաջին հերթին պետք պատվով կրել համազգեստը, հարգել այն բոլոր ծառայողներին, որոնք երբևիցե կրել են համազգեստ, պահել նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Կոնկրետ ինձ համար մեծ պատիվ է որպես ոստիկան ներկայանալ հանրությանը, փորձել ավելին անել նրանց խաղաղ ներկայի և ապագայի համար, սովորեցնել՝ ինչ է օրենքը, ու ինչու պետք է հարգել օրենքը և ենթարկվել օրենքին: Թե ինչքանով եմ հաջողել, չե՛մ կարող ասել: Մի նպատակ ունեմ, որ մեր երկրի բոլոր անդամները պետք է քնեն խաղաղ երկնքի տակ, և ոչ ոք չպետք է մտածի թալանելու, կողոպտելու, քծնելու ու խաբելու մասին: Առաջին հերթին ոստիկանը պետք է լինի խելացի, զուսպ, հաշվենկատ և ուշադիր, իսկ այդ ամենը ձեռք է բերվում սովորելու ընթացքում: Ոստիկանն այնքան ճկուն միտք պետք է ունենա, բարեվարք ու հավատ ներշնչող պետք է լինի, որ քաղաքացին ոստիկանի հետ շփվելուց ապահով զգա, հարգանքով լցվի, զգաստանա և հասկանա, որ իր դիմաց կանգնած է համարձակ, խելացի և իր գործին նվիրված անձ:

Սերյոժա Գալստյան
Քոլեջ, առաջին կուրս,
ոստիկանության ավագ սերժանտ

Ստեղծագործում են մերոնք

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՓՈՒՆՁ

ԱՇԽԱՐՀ

Մի՞թե չհոգնեցիր, աշխա՛րհ,
Քո սուտ ու նենգ խաղից,
Փնտրում ես ամեն հնար՝
Շեղվել տիրոջ կամքից:
Մի՞թե չընկար, աշխա՛րհ,
Չարությանդ պատճառով,
Դարձի չեկար, աշխա՛րհ,
Որ փրկվես տիրոջ խաչով:

ՔԵԶ ՀԵՏ

Թռիչքի համար թևեր պետք չեն,
Բայց տու՛ր ինձ թևեր,
Որ երբ աչքերդ հանկարծ հոգնեն,
Գրկեմ քեզ, ճախրենք միասին դեպի վեր:
Սիրելու համար խոսքեր պետք չեն,
Բայց տու՛ր ինձ մտքեր,
Երբ կամազուրկ կլինեն խոսքերը բոլոր,
Հիշի՛ր խոստումը մեր:
Ներելու համար երդումներ պետք չեն,
Բայց տու՛ր ինձ երդում...
Որ հայցված ամեն մի ներում
Չխորի սեպ մեր մեջտեղում...

ԼԻՆԵՆՔ ԱՐԴԱՐ

Մի խոսքը հոգի կքանդի,
Մի մարդը կքանդի տներ,
Երբ խիղճը հոգուց անջատվի,
Մարդուց կբխեն դևեր:
Մենք ի՞նչ ենք առանց խղճի,
Մենք ո՞վ ենք առանց հավատ,
Թե Աստված մեզ չփրկի,
Չարքերը կտիրեն մեզ հաստատ:
Արի՛ խոսենք զգույշ,
Արի՛ սիրենք իրար,
Որ ապրենք անխռով, անհույզ,
Որ Աստծու մոտ լինենք արդար:

Ալիկ Հովհաննիսյան
ոստիկանության լեյտենանտ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.07. 2024թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան